

Գ Ս Մ Ա Ն Ք

ԼՈՅՐ կը հրատարակուի բաց ի կիրակի եւ Տօն օրերէ :

ԲԱԺԱՆՈՐԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ	ԿԱՆԻԿ
Տարեկան	վեցամեակ
Գ. Պոլսոյ համար 6 մէծիս	3 մէն.
Գաւառաց	7 3 1/2

Գ Ս Մ Ա Ն Ք

ԼՈՅՐի վերաբերեալ ցամաք եւ այլ գրութիւն պէտք է ուղղել առ խմբագիր-ՏՅՈՒՂԵՆ Բ. Մ. ՊՈՉՈՂՅԱՆ, Կ. Պոլսոյ, Չագմագըլար, Սիւմպլիլի խոսք թիւ 47: Ծանուցման ճոյր մէկ անգամի համար 2 կրօն է. աւելի անգամներու համար սակարկուելու կը լինի :

ԼՈՅՐ

ՀԱՆՁՆԱԳԱԶՕՐԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ, ԿՐԾՆԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Կ. ՊՈՒՂԻՍ 3 ՅՈՒՂԻՍ

Ա. Ա. Չ. Ա. Յ. Ի. Ն.

ՍՍՍՍՍՍ

Բուզանդիանի հուշակաւոր պատմական թաղերէն մին եղած է Սամաթիա, հոծ հայաբնակ կեդրոն, որոյ բնակիչը պարկեշտ արհեստաւորներ են, որք կը փայլին բարեպաշտութեամբ, կրթասիրութեամբ եւ ժողովրդակա՛նութեամբ:

Այս հինաւոր թաղին մէջ հինը նորին հետ կը մրցի, եւ այս մրցում իրիտ անգղալի կերպով կը յառաջդիմէ միշտ դէպ ի բարեգոյնն եւ յօգտակարն, եւ կը մնայ միշտ արծարծման մէջ նախնի հոգեւորական եւ աւանդն, զոր իրենց հոգեւոր նախնիք թողին իրենց:

Սամաթիա իրատ նշանաւոր աղջայիններ պարգեւած է աղբին, բարեբարոյ եւ աղքատէր եկեղեցականներ, հանճարեղ գրադէսներ եւ դաստիարակներ, համբաւաւոր վաճառականներ, եւ արհեստաւորներ, որոնք ժամանակ առ ժամանակ եկեղեցւոյ եւ Ազգին մեծամեծ ծառայութիւններ մատուցած են, եւ մինչ ցայսօր այս ոգեւորումը եւ շարժումը կը շարունակէ ի Սամաթիա, եւ Պոլսոյ դահանգան թաղերու մէջ բնակեալ Սամաթիոյ գաղթականք ամեն ուրեք նոյն երանդ եւ շարժումն ունին:

Հոգեւոր Ը. Ներսէս Ե. Պատրիարքի հրամանաւ 1883-1884 մտ մէկ տարի Սամաթիոյ թաղի մէջ քարոզական պաշտօն վարեցինք, եւ ի մտայ կարող եղանք սերտել այդ պատուական ժողովրդեան կեանքը եւ տեսնել թէ՛ Սամաթիա խաղաղութեան, օրոյ, միաբանութեան եւ յառաջդիմութեան մարդն է, թէ՛ Սամաթիա շարժման եւ մղման եւ երկ կարօտ է, թէ՛ Սամաթիա դիտէ շարժել ու շարժել, եւ կը նմանի Սպարապետի որդոց՝ յանդուգն, պարզախօս, արի ու երանդուն:

Մենք այս սողեր ոչ ի պարժանս Սամաթիոյ կը գրենք, եւ կ'ատենք շողքորթութիւնը, այլ թէ՛ կը սիրենք զՍամաթիացիս եւ փառաբող ենք միշտ իրենց զարգացման ու յառաջդիմութեան, եւ փան դի իրենք բարեպաշտ, կրթասէր ժողովուրդ մի են, կը մտղմենք անյողդողդ միաբանութիւն:

Ասկէ իրը մէկ եօթնեակ առաջ էր որ Սամաթիոյ անուց ընկերութիւնը կատարեցին 17րդ տարեդարի հանգիստը. ինչ նպատակ ունի այս

ընկերութիւնը — նպատակը թաղին երկուսու վարժարանաց յառաջդիմութեան, մինչդեռ շատ մը թաղերու ծաղիկ երիտասարդութիւնը բոլորովին ի գո՛ւր կ'անցնէ իւր կեանք, ազգին իսպառ անդուտ, եւ ահա Սամաթիոյ երիտասարդութիւնը ամենայն արթնութեամբ կը հսկէ իւր թաղին ապագային վրայ, իւր եղբարց եւ քերջ վերայ, արդարեւ վստմագոյն դործ:

Կը շարժի Սամաթիա եւ կը մղի միշտ յառաջ, Աստուած կ'առաջնորդէ Աստուած կը յաջողէ, եւ ժողովուրդը կ'աշխատի. Հոն մեծ, իշխան, պէյ, էֆէնտի չկայ, այլ ամենքն ալ եղբայր են, ամենքն ալ հաւատար, ամենքն ալ բանւոր:

Ասկէ 19 տարի առաջ Սամաթիա բոցերու մէջ ճրագի նման կ'անցնէր, կը մարէր. հուրը լախեց ու կրակեց եկեղեցին, դպրոցները, աղջային կարգանքերը, ժողովրդեան մեծ տնտեսն ընակարանները, միւրի վրայ նստան, աւերակաց մէջ, իրճիթներու ներքեւ, համբերեց ու սուկաց Սամաթիան այս մեծամեծ պատահարաց դէմ, եւ այժմ իբրև զարժիւ կը նորոգի, նորափետուր կը վարդարի:

Արդարեւ միխթարական է տեսնել որ Սամաթիոյ բարեպաշտ ժողովուրդն ինքնաշխատութեամբ եւ աղջային բարեբարաց օգնութեամբ կանգնեց իւր հակապաշտ երկուսու վարժարանները եւ 1884 էն ի վեր կ'աշխատի Ս. Գէորգայ եկեղեցւոյն շինութեան մեծ գործին:

Սամաթիա ոյժ եւ երանդ գտաւ՝ Սամաթիոյ ժողովրդեան թոռներէն, Ազգիս մեծանուն բարերար Յակոբեան եղբայրներէն, եւ չնք ուզեր զովեստներ կարգաւորվ միւրաւորել բարեխնայաւոր Պէդեանի արժանաւոր հեռուուղաց բարեպաշտական զգացումներն, այլ ի խորոց սրտէ կ'օրհնենք զիրենք եւ բոլոր ազգիս բարեբարները:

Յոյժ միխթարական է տեսնել որ Յակոբեան Միքայէլ էֆէնտի եկեղեցւոյ շինութեան բարձր հսկողութիւնն եւ նախագահութիւնն ընդունելով, յոգնալատակ արհուլութեամբ, նիւթական մեծամեծ զոհողութեամբ կ'աշխատի ի գլուխ հանել Ս. Գէորգայ հուշակաւոր եկեղեցին, ամբողջ ծախսը կէսն իւր եւ իր հարազատին Յովհաննէս էֆէնտի հանելով:

Օրհնեալ ըլլայ իրենց անունը եւ յիշատակը եւ Տէր Աստուած գորացնէ զիրենք միշտ առաքինական եւ ազգասիրական գործոց մէջ փայլել:

Սամաթիոյ Պատ. Թագ. խորհրդոյ, շինութեան յանձնաժողովոյ եւ Գեր. Գործողին աշխատութիւնը եւս ան-

ուրանայի են. եւ մենք հաւատք ունինք որ այս ոգեւորմամբ տարին չբարձրած՝ եկեղեցւոյ շինութիւնն մեծաւ մասամբ պիտի աւարտի ի հոգեւոր միխթարութիւն թաղին ժողովրդեան եւ ի պարժանս ազգիս:

Շինութեան Յանձնաժողովը որ ընդ նախագահութեամբ Ս. Մ. Պատրիարք Հօր մէկ քանի նստեր ունեցաւ՝ ի նկատ աւելով բոլոր ծախսոց գումարը որ 6-7,000 լիւրայի կը յանգի, որոշած է 1,000 լիւրայի հանդանակութիւն մի ընել մայրաքաղաքիս թաղերուն մէջ ի նպատ շինութեան Ս. Գէորգայ եկեղեցւոյն:

Հայ ժողովուրդը որ ընդհանրապէս Ազգային ամեն բարեպաշտական հաստատութեանց, եկեղեցեաց շինութեան համար իւր լուծման երբէք չէ ինայած, այս կարեւորագոյն շինութեան մէջ եւս իւր համակրանքով օժանդակութիւնը պիտի ունի թէ Սամաթիոյ ժողովրդեան:

Սամաթիոյ հատարակութիւնն Ազգային ամեն խնդրոց եւ ամեն հանդանակութեանց դրեթէ ընդ միշտ մասնակցած է բարոյապէս եւ նիւթապէս Ազգին զարգացման եւ յառաջդիմութեան օգնելով. արժանի է որ ուրիշ թաղերու ժողովուրդք եւ իրենց եղբարց Սամաթիոցոյն՝ օրհնութեան փութան, եւ արդեամբ ցոյց տան թէ՛ քաջալերող են բարեպաշտական գործերը:

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԿԱՊԵՏՏԻ

Մոսկուայի Կաթեթը կը հաստատէ թէ, Անդրկաղեր եւ Ֆրանսացիք օր քան զօր սերտ յարաբերութիւններ կը հաստատեն Ռուս վաճառականաց հետ ի Կեդր. Ասիա եւ ի Կառկաս: Մէրլի մէջ ազնուազգի երկվարներ կը գտնեն ասպատաններու համար Տիգրիսի եւ Պարսի մէջ, որք թիւրքմէն եւ Պարսիկ կապերաներու հրապարակաց ամենէ մերձ քաղաքներն են, Մեզլիացիք եւ Ֆրանսացիք մեծ քանակութեամբ կը գնեն անոնցմէ, Կայցերէն գորգաշինութեան գլխաւոր կեդրոններն, հրապարակին վրայ կը գտնեն կապերա շինելու եղանակն եւ ընդհանրապէս շատ կը համակրին այս վաճառականութեան պայմանաց:

Պարսի մէջ մասնաւոր Տաղիտանի վորրիկ կապերաներ են որ ուշադրութիւն կը դրուեն: Անոնք Պարսի մաս, Տէպէնտի եւ Շուշի մէջ կը շինուին: Ամեն հեաւրքքրականներն են այն փոքր կապերաներն զորն Պարսիկները կը գործածեն ազօրեւել ժամանակ անոնք նր-

շանաւոր են իրենց յոյժ նորանշան գծագրութեամբ եւ մաքուր ու փափաղ բարդութեամբ: Անոնց մէջ կան որ գարաւոր հնութիւն մ'ունին. յորդոց յորդի կ'անցնին մինչեւ որ պատահամբ վաճառականաց ձեռքըն իյնան: Արեւելից այս բոլոր արտադրութիւններէն Պարսկական կապերաներն առաջին անգը կը դրուուին, այնչափ իրենց փափկութեամբ եւ կակղութեամբ որչափ գոյնեւորներդաշնակ յօրինուածով: Այս կապերաներու արտադրիչ գլխաւոր կեդրոններն կը գտնուին Խորասանի եւ Իրազ—Աճէմի նահանգաց մէջ:

Ար հազարաւոր բազումներ անոնց շինութեամբ կ'ըզաղին: Բայց ամենէ գեղեցիկներն են անոնք, որք Քէրմանի եւ Ֆերաղանի շրջակայքերէն կ'ընեն: Սորա հիւտուած են միմայն Քէրմանի, Խորասանի կամ Գրդաստանի այժի բուրգով, որ արտաւորուող զարդարեալ մասնաւոր փայտով, որ լայնաբաւ ծառերէն մասնաւոր երանակի մ'արդիւնքն է: Այս այժերուն բարդն այնքան այլապէս դոյնի որ կարելի է աղբի աղբի գծագրութիւններ շինել անոնցմով: Բուզը ներկելու համար կը գործածեն Պարսկական եւ Հնդկական հուշակաւոր գոյններ, զորք ձեռք կը բերեն տունկերէ ի ձեռն երանցման: Այս ներկերը կը հանուին արմատներէ, բոլորջներէ եւ ծառերու տերեւներէ: Ամենէ սիրելի ներկերն են կապոյար, նարնջագոյնը, դեղինը, կեռասագոյնը, նուազոյնն եւ կանաչը: Կապերան մ'որպիսութիւնն ստուգելու համար Արեւելից մէջ սովորութիւն է վառած ածխով մը շոյափել զայն, եթէ ածխոյ այրոյցն անոնի առանց հետք թողու, կապերուր լաւ կը համարուի:

Կապերա շինելու համար չեն գործածուիր ոչ մեքենայք եւ ոչ ալ ուրիշ անասկ կնճաստ գործիչներ: Ամեն բան ձեռամբ կը լինի եւ այս աշխատութիւն շատ համբերութիւն կը պահանջէ: Գորգաշինութիւնը Պարսկաստանէն ի Հնդկաստան փոխադրուած է, ուր տարածուած է մասնաւոր Լահորի եւ Միազաբորի մէջ:

Փոքր Ասիա հուշակաւոր է իւր գորգերով, որք Օսմանեան կապերուր կը կոչուին: Լաւագոյններն կը շինուին Այազի նահանգին մէջ եւ քնմուտիւն շրջակայքն, ուսկից յետոյ կը փոխադրուին: Մարտի Սարիտանացւոց շինած կապերաներն ալ յոյժ գեաւատուած են, որք գլխաւորաբար թանձր են կ'ընեն ձեւերուր կապերուր:

Կապերա շինելու համար չեն գործածուիր ոչ մեքենայք եւ ոչ ալ ուրիշ անասկ կնճաստ գործիչներ: Ամեն բան ձեռամբ կը լինի եւ այս աշխատութիւն շատ համբերութիւն կը պահանջէ: Գորգաշինութիւնը Պարսկաստանէն ի Հնդկաստան փոխադրուած է, ուր տարածուած է մասնաւոր Լահորի եւ Միազաբորի մէջ:

Փոքր Ասիա հուշակաւոր է իւր գորգերով, որք Օսմանեան կապերուր կը կոչուին: Լաւագոյններն կը շինուին Այազի նահանգին մէջ եւ քնմուտիւն շրջակայքն, ուսկից յետոյ կը փոխադրուին: Մարտի Սարիտանացւոց շինած կապերաներն ալ յոյժ գեաւատուած են, որք գլխաւորաբար թանձր են կ'ընեն ձեւերուր կապերուր:

Փոքր Ասիա հուշակաւոր է իւր գորգերով, որք Օսմանեան կապերուր կը կոչուին: Լաւագոյններն կը շինուին Այազի նահանգին մէջ եւ քնմուտիւն շրջակայքն, ուսկից յետոյ կը փոխադրուին: Մարտի Սարիտանացւոց շինած կապերաներն ալ յոյժ գեաւատուած են, որք գլխաւորաբար թանձր են կ'ընեն ձեւերուր կապերուր:

Ե. ՏԵՄԻՐՔԻՆՆԵՆ

ԳՐԱԿԱՆ ԵՒ ԽՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ
ՇԱՐՔՈՒՄ

Հատոր Գ. Յուլիս

Բովանդակութիւն. — Մերանայ. — Էր
արանցիքը (Տաղ). — Վերջում Իւկո և Իւ-
խան Լուսինեան. — Գրումաէլի Նախա-
բանն. — Հայրիկի և Կոստանդնուպոլսի.
— Քաղաքի Պէտրեան. — Հայ թերթ մ'ի
ծրարս. — Թրքաշայ մամուլն. — Յար-
գանք առ ազգասէրն. — Օրագրական
դատ մը :

ԺԱՄԱՆԱԿԻՐԱԿԱՆ

— 00000000 —

Պայրամի տունին առթիւ, Վեհ.
Սուլթանը Նշանը — Իմիթիպի սակի
չքանչան ընծայեց Օսմ. ծառայու-
թեան մէջ գանուող Գերմանացի
Քասիբը, Քամֆոլդերը, Ռիսթով,
Վանդալը Կալ և Սթարի փայտերուն:
Ն. Կայսերական Վեհափառու-
թիւնը Պայրամի առթիւ, Շէֆադա-
թի Ա. պատուանշանն ընծայեց նաև
Եզիպտոսի Խալիվ Թէվֆիք փոշայի
լծակցին :

— Վեհ. Սուլթանին յատուկ հը-
րաւերմամբ, Ռնգլիական արտասովոր
դեպքան Սըր Ռիլեամ Հուայթ իւր
լծակցին հետ ներկայ գանուեցաւ
Պայրամի արարողութեան : Նոյնին
Վեհմովթիւնը Թարապիայէն ճորմա-
Պահէ գնացին պայտական շոգե-
նաւակով մը, զոր Վեհ. Սուլթանն
անոնց արամադրութեան ներքև զը-
նել տուած էր :

— Պատերազմական դործոց նա-
խարարութիւնը նախընթաց օրը Մահ-
սուսէի ընկերութեան ճանիկ շոգե-
նաւով 800 զօրք զրկեց յԱփրիկեան
Տրիպոլիս :

— Յունաց Ս. Պատրիարքը նա-
խընթաց օրը Հէյալէի կղզիէն Բերա
Ինչելով, Պայրամի առթիւ այցելու-
թիւն տուաւ Մեծ-Եպարքոս Բարձր.
Սայիտ փայլալի և Օսմ. նախարարաց :

— Մանիթէօր-Օրինթալ կ'ըսէ լծէ
հակառակ լրագրաց ոմանց հերքման,
Պ. Օպուանոյ ծխախոտի Բէժի ընդ-
հանուր անօրէն անուանած է վերջ-
նապէս :

— Միախոտի Բէժի և Օսման-
եան ընդհ. պարտուց Վարչութեան
միջև գոյացած կարգադրութիւնն
որ է կայսերական գանձու լծարկի
750,000 ոսկույ արբեկան հասարկէն
60,000 ոսկի դեղձել, կայսերական
կառավարութեան վաւերացման ներ-
կայացուած է, բայց Բ. Գուսըր տա-
կալին օր և է որոշուած չէ տուած :
Եւրոպայ արժէտեարց մանախոմբերն
որոշեր են բողբեջ այս կարգադրու-
թեան գէմ :

— Հանրային կրթական նախկին
նախարար Միւնիթ փաշա իւր վերջին
հիւանդութեանէն բոլորովին ապաքի-
նած լինելով, սկսած է առնէն դուրս
նեղ :

— Յուլիս 9էն մինչև 13 բովան-
գակ Սոլամիոյ մէջ հնտախաէ բըն-
նուորներուն թիւն եղած է 6,500,
որոց կէսը մեռած են :

— Ռուսիոյ մէջ այս օրերս ցարենի
և ալիւրի գները մեծապէս բարձրա-
ցած են, սալուրին վրայ լծէ հունձըն
այս ատրի յոյժ միջակ է : Վերջին
հետազօրեր կը ծանուցանեն լծէ, գը-
նոց բարձրումը կը շարունակէ :

— Արաբքին գործոց նախարար
Վաթմ. Ասիմ փաշա բոլորովին ապա-
քինած է իւր վերջին հիւանդութե-
անէն :

— Մաքառանց վարչութիւնը Պահ-
չէ-գարուի սուրբ կոչուած ընդար-
ձակ գետինը գնեց է միւլերանոյնը
չինելու համար :

— Գալիկրատի մէջ շինուող երկ-
րագործական վարժարանին համար
ատաղձ ամանոց ցահանաւ մը (մալու-
նա) նախընթաց գիշեր Միլերկրակա-
նէն եկող շոգենաւէ մը ընդհարում
կրելով, ընկզմեցաւ, և նաւատիք
ծովամայն եղան :

— Նախընթաց գիշեր փոքր Չէք-
մէճէի բացերն անգլիական շոգենաւ
մը՝ ձկնորսական մեծ նաւակի մը
զարնուելով ընկզմեց գայն, որոյ
մէջը դանու ոչ 15 ձկնորք հակառակ
հասած օգնութեան, չկրցին ազատիլ
գիշերուան մթութեան պատճառաւ :

— Ներքին գործոց նախարարու-
թիւնն Եւրոպայի զանազան քաղաքաց

մէջ հրատարակեալ Բուենարէն, Թուր-
քերէն և Արաբքին 10 ի յոյ լրա-
գրաց Թուրքիա մանէն արդիւնց :
Ասոնց մէջ կը տեսնուին նաև երկու
հայերէն լրագիրք, Մշակ և Մի-
օն (Մեքու) :

— Տէյլի Նիւզ Վաւերայէն հեռա-
գիր մը կը հրատարակէ ծանուցանող
լծէ, Բ. Գուսըր արամադր է Անգ-
լիական կառավարութեան հետ վե-
րասկներու այն բանակցութիւններ,
որք Օսմ. զօրաց կողմէ Սուսանի
զբաւման կը վերաբերին : Առաջա-
գրեալ կարգադրման հիմը պիտի լի-
նի Օսմ. զօրաց լծակներուն վճա-
րումն՝ Եզիպտական գանձէն :

— Հէյալէի կղզւոյ Յունաց անեւ-
որական մեծ վարժարանին մրցանա-
կարաչաութեան հանգէսն անցեալ
կիսակի օր կատարուեցաւ ընդ նա-
խադասութեամբ Յունաց Պատրիար-
քին : 18 սուսուսարտք վկայական
ստացան ձեռամբ Ն. Սըրադիութեան :

— Հէյալէի առեւտրական վարժա-
րանն մարաքաղաքի կրթական հիւս-
արց հաստատութիւններէն մին է,
և ուսմանց կատարելով հիմնագրով մը
կը կառավարուի : Կուսուցուին զը-
լուստորագէտ հին հէյլներէն, զի-
տուութիւնը, վաճառականութիւն և
վերջապէս երկրին մէջ ամենէ աւելի
գործածական կողարդի լեղաները,
վարժարանի ժախքը կը հոգացուի
զլիւստորագոր մարաքաղաքի և օ-
տոր երկիրներու յոյն սեղանաւորաց
և վաճառականաց կամաւոր հանգա-
նակութեամբ : Ռուսումնաւարտ աշա-
կերտք մասնաւորաբար առեւտրա-
կան տապարիզին սահմանուած են :
Այս վարժարանն մեծ պարճանը է
Յոյն ազգին :

— Թէեւ Սթամպուլէն առնելով
ծանուցած էինը լծէ ներքին գործոց
նախարար Բարձր. Էսհէմ փաշայի
կառքին կոխտուած տղկներէն մին
մեռած էր, բայց վերջին տեղեկու-
թեանց նոյնիմով, վերաօրեալ երկու
տղայք եւս ողջ են և կը դարմանուին
ժախքը Ն. Բարձրութեան, որ մին-
չեւ իսկ անձամբ անոնց տունն եր-
թալով, օրախոսութիւններն հարցու-
ցած է :

— Միախոտի Բէժի ընկերու-
թիւնն երկու օրէ ի վեր սկսած է

ծխախոտոց դիւները բարձրացնել,
սակայն ոչ Բէժի ընկերութիւնն և
ոչ իսկ Կայսերական կառավարու-
թիւնն այս մասին օր և է պայտանա-
կան դեկուցում մը չեն ըրած : Թէ ինչ
պայտանուց զորքի տեսնուած է ճը-
խախոտոց դիւները բարձրացնել, որք
արդէն շատ անձան չէին :

— Թարթուս յանուն ժողովրդեան կը
պահանջէ որ Բէժի ընկերութիւնը
և Կայսերական կառավարութիւնն
հաճին հանրային կարծեաց զոհա-
ցում տալ :

— Փնտթմանթիմու բայիս լրագիրը
կը հաստատէ նէսլորոսի տուած այն
լուրերը լծէ. Վաւերայի մէջ Պուլլար
կամաւորներ զինուորագրուելով, Սո-
ֆիա կը զրկուին Մակեդոնիոյ մէջ
ապաղայ տապաւանութեանց պատ-
րաստուելու համար : 120-150 ան-
ձինը վաւերային մեկներ են իւրա-
բանելու 10 Օսմ. ոսկի և ձեռք մը
նոր զրեւտ սասանալով : Զինուորագ-
րութիւնը կը շարունակեն ընդարձա-
կապէս, Իլիանութեանց այցելուալու :
Վաւերայի մէջ զորոց երեք է լծէ
Թուրքերը յարկումած էին Մակե-
դոնիոյ մէջ և լծէ ապստամբութիւնը
կատարելապէս տիրած էր այս գա-
ւառին : Դիւմամբ տարածուած այս
զրոյցները կը վաւերին ամենէ յան-
դու գն աճանց խանդը և կը նպաս-
տուորէին կամաւորաց զինուորագ-
րութիւնն :

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր

Պերլին 15 յուլիս
Վիլհէլմ կայսրն Էմիլ մէջ իւր
դարմանումն աւարտելէ յետոյ, Բոսպ-
լէնց ուղևորեցաւ :

Վիլհէնա 15 յուլիս
Պրիւսի մէջ խոսովութիւնը ծա-
ղած են երկու ընկերվորականաց
ձերբակալման պատճառաւ : Կախ
ծագած է ոստիկանութեան և ցոյց-
արարներուն միջև :

Լանդագ 15 յուլիս
Պորայի լծակներն ինկան այն զը-
րայցի վրայ լծէ Ռուսը Զիլլիքարի
վրայ կը յաւանջանան : Թայմը հրա-
տարակած է այս լուրը :

Լորս Ռ. Չըրչիլ, երեսփ. ժողովոյ
մէջ այս մասին հարցման մը պատաս-
խանելով ըսաւ լծէ Ռայտ Ռուէյ
գնդապետն արդարև այսպիսի լուր
մը ստացած է, բայց ստոյգ բան մը
չկայ :

Այս ձեռնայարկն իւր լծէ իւր մօր գերեզ-
մանն էր :
Առաջին անգամ որ Տիտիէ դրան զարկաւ,
Շարմէթ շուարեալ և զողջոնն կանգ առաւ :
Ո՞վ կարող էր այս սրբատեղւոյն մէջ զինքն
խոտվելու դալ :
Մայր Ժէրմէնը, անտարակոյս, բայց ինչ
կ'ուզէր իրմէն :
Հետաքրքեալ յառաջացաւ զէյ ի դուսը :
— Դո՞ք էք, Մայր Ժէրմէն, ըսաւ անվրա-
տահ ձայնով մը :
— Մայր Ժէրմէնը չէ՞, պատասխանեց Տիտիէ,
բարեկամ մ'է :
— Անուննի՞դ :
— Պարոն տը Լօրսեյ :
Կուսք բացուեցաւ :
— Կոնթրանէն գէշ լուրեր օնիք, հարցուց
Շարմէթ՝ անհանգստութեան սկզբնաւորու-
թեամբ մը :
— Ոչ, զաւախ, ըսաւ Տիտիէ, այս պա-
հուս խնդիրն անոր վրայ չէ :
— Որո՞ւ վրայ է սարնին :
— Ի՞մ վրայ . . .
Շարմէթ հետաքրքրութեամբ իւր խօսակցին
նայեցաւ, և՛ առանց հակնալու ինչ որ ի ներ-
քուստ կը կրէր՝ զգաց լծէ անոնք տարտախ մը
կը տիրէր իւր վրայ :
Սակայն Տիտիէ նստած էր, սաստիկ յուզ-
եալ և դարձուրեալ :
Այժմ որ Շարմէթի առջև կը գտնուէր, կը
վարանէր և ոչ էւս կը շահարձակէր :

— Գրեթէ ի միասին մեծցած ենք, պատաս-
խանեց Սաք-ա-Բլադըր :
— Ձեր մայրն է որ երկուքը ալ խնամած է :
— Եթ' զձ սուրբ կինը Շարմէթն իւր աղջկանը
պէս կը սիրէր, և՛ շատ բնական էր այս :
— Արդեօք ինչու՞ համար :
— Շարմէթ որք չէր :
— Ճշմարիտ է :
— Իւր մայրը նոր կորուստած էր :
— Հէլէն . . . ո՞չ, ըսէք, ըսէք, միթէ՛ չէլէն
չէ՞ր կուռներ :
Տիտիէ չէր կրցած ինքնը զսկել . . . ան-
համբերութեան և սիրոյ այս տապակն ակա-
մայ խոստատած էր իւր բերնէն :
Սաք-ա-Բլադըր՝ առջեալ՝ անոր նայեցաւ :
— Բայց միթէ՛ դուք կը ճանչէ՞ք զայն, ըսաւ
կասկածաւ ձայնով մը :
— Ե՛ս . . . ըսաւ Տիտիէ . . . լաւ կը տես-
նէք :
— Այն ատեն . . . գիտեք նաև լծէ ինչո՞ւ
համար Շարմէթ բացակայ է այսօր :
— Կը տարախոսով . . . Սոյի փողոցը զնա-
ցած է :
— Ճիշդ է :
— Կարմիր ձեղնայաբիլ :
— Ինչ կ'ըսէք :
— Եւ այս սրբատեղւոյն մէջ, առանձինն,
իւր մօր յիշատակին և Աստուծոյ հետ, կ'աղօթէ՛
անոր համար՝ զոր երբեք չէր տեսնուած : Ե՛րբ
բնաւ չպիտի ճանչէ :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ԱՂԵՔԱՍԱԿԻ Գ. ՔԱՆՈՍԵԱՆ
Յ Ո Ղ Ն Ե Ր ՈՒ Յ Ո Ղ Ն Ե Ր
ՊԱՏԱՆԵԿԱՆ ԲԱՆԱՍԵՆԱՆՈՒԹԻՒՆՔ

Ճօրն և զարգարուն տպագրուած էր և զարգարուն տպագրուած էր և զարգարուն տպագրուած էր...

Գ Ր Ա Գ Ի Տ Ո Ի Թ Ի Ի Ն
ՏԵՍԱԿԱՆ Ե Ի ԳՈՐԾՆԱԿԱՆ
(Նոր դրոշմով)

Մասն Ա.

Ո Ճ

Հանգերձ բառագիրտական և մտամարզական վարժութեամբ
Յանձնարարեալ յՈւսումն. Խորհրդոյ Ազգ. Կեդր. վարչութեան
Յօրինեաց ՄԻՀՐԱՆ Պ. ԱՍՔԱՆԱՁ
Ուսուցիչ
Հայկական լեզուի և Գրագիրտութեան

Ա. Հասար 40 ղրշ
Բ. » 40
Բանալի 45

Կը գտնուի Պոստոյ բոլոր գրավաճառաց, կամուրջի գրուելը ջրավաճառաց և Ղալաթիոյ կողմը թղթավաճառ Յ. Արշակ էֆէնտիի քով: Դպրոցաց համար Օ/ Օին 10 զեղչ:

Ը Ն Թ Ա Յ Ք

Դաստիարակութեան եւ կրթութեան

ՆՈՐ ԳՍԱԳԻՐԲ ԹՈՒՍԳԻՏՈՒԹԵԱՆ (ՄՏԱԻՈՐ ԵՒ ԳՐԱԻՈՐ)

Առաջին եւ երկրորդ տարիներու համար

Ա. Շ Խ Ա Տ Ա Մ Ի Բ Ե Ա Յ
Յ. Գ. ՔԱՆԱԳԱՇԵԱՆ
Գ. Տպագրութիւն
Բարեփոխեալ եւ յաւելեալ

Ներկայ դասագիրքը՝ իւր այս նոր տպագրութեան առթիւ՝ մանկավարժութեան նորագոյն պահանջմանց համաձայն հիմնովին բարեփոխեալ, և մտաւոր ու գրաւոր հրահանգիչ ու զործնական խնդիրներով ձևացած լինելով, Պատ. Տեսչաց և ուսուցչաց լուրջ ուշադրութեան կը յանձնարարուի: Կեդրոնատեղին է Մարգարեան գրատունը, Մէրճան, թիւ 57. Կը գտնուի նաև միւս գրավաճառաց քով: Գին 3 ղրշ: Բաւական քանակութեամբ գնողաց օրինաւոր զեղչ կը լինի:

Այս առթիւ կը ծանուցուի որ Թուագիրտութեան Դասագրքի Գ. տարին ևս պատրաստ լինելով, ի մտտոյ տպագրութեան պիտի յանձնուի:

Ք Ե Ր Ա Կ Ա Ն

ԿԱՄ

ՄԱՆԿԱՆՅ ԳԻՐՔԸ

ԲՈՒՈՐՈՎԻՆ ՆՈՐ ՈՃՈՎ

Ե. Տպագրութիւն Պատկերազարդ.

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ԳՐԱՎԱՃԱՌՈՒ Գ. Յ. ՄԱՐԳԱՐԱՆ

Սոյն քերականը պատրաստուած է զիւրընտել և գործածելի բառերով և տղայոց հասկանալի իմաստով: Փորձուած է թէ՛ սոյն նոր ոճով, տղայք, խիստ կարճ միջոցին մէջ՝ կը վարժուին կարգաւ և սիրել իրենց գիրքը:

Ուստի կը յուսանք որ ալ ևս հին ոճով քերականներ դպրոցները մուտ գտնելէ կը դադրի, առ այս Ե. տպագրութեան առթիւ գինն ալ զեղչուած է և կը վաճառուի,

Հատը 10 փարայ

Ս Ե Ր Ա Ն Ո Յ Ք

Գրէջ ՏԻԿԻՆ Ս. ՏԻՒՍԱՔ

Մայտաքի ազնուագոյն հեղինակուցն երկրորդ գործն է այս վեպն, որ գեղեցիկ տպագրութեամբ իւրոյ ընծայուած է՝ ձեռամբ Յ. Զինճիրճեան էֆէնտիի:

Կը վաճառուի սակն գրավաճառաց քով ի գին 20 ղրաշի և կեդրոնատեղին է Զինճիրճեան գրատունը:

Բ Ն Թ Ե Ր Յ Ա Ր Ա Ն

ԿԱՄ

ՍԻՐՈՒՆ ՉԲՕՍԱՐԱՆ

ՄԱՆԿԱՆՅ ԵՐԳՐՈՐԳ ԳԻՐՔԸ

56 Գեղեցիկ պատկերներով զարդարուած

Սոյն դասագիրքը սակեց առաջ հրատարակեալ ՔԵՐԱԿԱՆ ԿԱՄ ՄԱՆԿԱՆ Յ ԳՐՔԻՆ Բ. մասն է. և կը պարունակէ՝ մանկական երգեր, կարճ հատուածներ, առածներ, առակներ և փոքր պատմութիւններ:

Գինն 2 դահեկան
Կը վաճառուի Մարգարեան գրատունը, Մերճան փողոց: Դպրոցաց համար 0,0 15 զեղչ կը լինի:

ԱՌԱՋԻՆ ԳԻՐԲ

ԳԱՂԻԵՐԵՆԵՆԵ Ի ՀԱՅ

ՔԱՐԳԱՆՈՒԹԵԱՆ

Ի ՊԵՏԱ ԱՁԳԱՅԻՆ ՎԱՐՃԱՐԱՆԱՅ

Յօրինեց Ռ. Յ. ՊԵՐՊԵՐՅԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Գ. ՊԱՂՏԱՏՆԱՆ

(Արամեան)

Սոյն դասագիրքն պատրաստուած է բոլորովին նոր և զիւրուայն գրութեամբ մի, որ կուգայ մեր ազգային վարժարանաց մէջ՝ Գաղիարէն ուսուցման եղանակն յեղափոխել և մինչև հիմայ գործածուած դասագրքերն և հին գրութիւնն վանել որք փոխանակ աշակերտին զիւրութիւններ ընծայելու, փոխանակ օգնելու նորա տաղին քայլերուն լեզուն մէջ զոր ահա

Կ'սկսի ուսնիլ, իրեն համար բարձրովին օտար մի լեզու, ընդհակառակն կը դժուարացնեն զայն և առաջին վայրկեանն աշակերտին առջեւ այնպիսի դժուարութիւններ կը հանին որք կը խրատուանեն և կը յուսահատեցնեն իսկ զինքը:

Մինչև հիմայ գործածուած դասագիրք լաւքանս և սրբ ըստ կարգին յարմար են միայն Գաղիացիներու իրենց մայրենի լեզուն ուսուցանելու և բարձրովին անյարմար և անօգուտ օտարազգի աշակերտի մը: Ահա այդ դասագրոց առջեւ գրուելու համար պատրաստուած է այս նոր դասագիրքն որ կուգայ մեր ազգային վարժարանաց մէջ մեծ պակաս մը լեցնելու և այդ կարեւոր լեզուի դիւրին կերպով ուսուցման հզօրապէս նպաստելու: Արդէն Յօրինուին անուան բառական դրուակն մ'է գործոյն կարեւորութեան և օգտակարութեան: Կը ծախուի ամէն հայ գրավաճառաց քով ի գին և դահեկան: Կեդրոնատեղին է Արամեան տպարանն, 13, Յակոբեան խան:

ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՅՅԵՏՈՄՍԻ

Հաւաքոյն քառթօնի վրայ ամէն լեզուաւ կը պատրաստուի ի գին 100 հատը 10 դահլ. պէտք ունեցողները պէտք է դիմեն յԱրամեան տպարան, Յակոբեան խան 13 Կ. Պոլիս:

Ա Չ Դ

ԼՈՅՍԸ ձեռքէ կը ծախուի նաեւ հանրածանօթ ջրավաճառ Պօղոս աղայի խանութն ի Պահճէ-գարու:

ԱՐՏՕՆԱՏԻՐ

ՀՄԱՅԵԱՆ ԵՊԻՍԿՈՍ ԳԻՄՆԱՍՏԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՐԳԱՐԱՆ

Տիտի տեսնելով որ եւրոպացիները մը կը խօսէր:
Ժամանակ ժամանակ իւր ճակատը կը շփէր, իւր կուրծքը շատակութեամբ կ'ուռէր, իւր նայուածքն աւելի եռանդուն կը լինէր:
Վերջապէս աւելի չզբաղեցաւ անով:
—Մնաք բարեա՛ւ, ըսաւ յանկարծ դուռն հասնելով:
—Կը մեկնի՞ք . . . ըսաւ Սադ-ա-Բադր, որ ոչ եւս բան մը կը հասկնար:
—Ո՛հ, մի՛ կեցներ զիս, բարեկամս, պատասխանեց Տիտի, տասն և հինգ տարիէ ի վեր այս վայրկեանին կ'սպասէի . . . և ահա վերջապէս եկած է: Այժմ Շարմէթի մէկ համարյուն իւր փայտներէն մին եթէ տեսնեմ, պիտի կարծեմ թէ անցեալն երազ մ'է, և թէ երբէք ո՛չ տառապած եմ և ոչ արտասուած:
Եւ մեկնեցաւ վազելով ուղղակի Սօլի փողոցը:
Մէկ րոպէի մէջ մտցած էր խոնարհութեան այն բոլոր միջոցներն զորս իւր վիճակը կը հրամայէր իրեն, և երբ Մայր Ժէրմէնի դուռը գորկաւ, զանց առաւ դիտել թէ արդեօք զինքն կը լրանէին:
Արդ, այս վայրկեանին իսկ, այն տան դիմացն ուր պիտի մտնէր, ծառուղւոյ մ'ստուերին տակ ծպտեալ երկու մարդիկ խորին ուշադրութեամբ մը կը դիտէին իւր մէն մի շարժումը:
Այս երկու մարդիկն էին Բօլլիլիէն և Տէ զ'էկատ կոմսն:

Ի՞նչ.
Սակայն դուռը բացուած էր, և Մայր Ժէրմէն ճիշ մ'արձակած, տեսնելով զՏիտի:
—Դո՛ւք, դո՛ւք, հոս էք, ըսաւ ահաբեկ ինչ անխոհեմութիւն:
—Ձեղնայարկն այցելել կուգամ:
—Որովհետեւ . . .
—Անոր բանալին ձեր քովն չէ՞:
—Անտարակոյս, բայց . . .
Մայր Ժէրմէն կը թոթովէր. յուզուած էր, և ինչ պատասխանելը չէր գիտեր:
Տիտիէ ծպտեցաւ:
—Օ՛հ, ըսաւ բարեպէր ձայնով մը, այսպէս մի զարհուրիք, Մայր Ժէրմէն: Վերը մէկը կայ, այնպէս չէ՞:
—Գիտէք ուրեմն . . .
—Շարմէթ: Աղջիկս . . . գաւա՛կս . . . Ո՛հ, կը տեսնէք որ գալս աղկի եզած է:
Եւ զէպ ի սանդուղը նետուեցաւ:
Վայրկեան մը մէջ, հինգ դատիկները մատուցեց:
Երբ ձեղնայարկն հասաւ, իւր սիրտը կը բարբաբէր՝ կուրծքը ընկանելու ջատի, և հարկազրեցաւ կանգ առնուլ շունչ առնուլ համար:
Ներսի կողմը դարձաբողի և յուշիկ քայլ մը կը լսուէր:
Շարմէթն էր: